ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 դեկտեմբերի 2024թ. թիվ 1000-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱՅԻ N 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՏԱՐՈՒՄԸ Ն.ԲԵՐՈՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2024 թվականի նոյեմբերի 20-ի թիվ 959-Ա որոշումը և հաշվի առնելով Ն.Բերոյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի N 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումը, մինչև մրցույթի արդյունքում տնօրենի ընտրությունը, դնել «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի N 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Նոնա Հրանտի Բերոյանի վրա:

2. «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի N 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«ՀՀ Լոռու մարզի Ախթալայի N 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի լիազորությունների իրականացման համար Նոնա Բերոյանին տալ լրավճար «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի N 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի դեկտեմբերի 3-ից:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ
2003720081

2024-12-03 17:28:39 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 3
ք.Վանաձոր